Ցուշագրի պատճէնները ուղարկուեցին և անգլիական ներկայացուցիչ Օ. Ուօրդրոպին և Ադրբէջանի կառավարութեան: Ներկայացուցիչները տեսակցութիւն ունեցան և Ադրբէջանի վարչապետի և Ղարաբաղի ընդհանուր-նահանգապետ Սուլթանովի հետ, որոնք այդ միջոցին Թիֆլիսում էին:

Մի քանի օր յետոյ գնդ. Հասկելին յուշագիր ներկայացրին և «Երևանի նահանգի վաղեմի բնակիչ Թուրքերը», որոնք գանգատւում էին հայերի դէմ և խնդրում ամերիկացիների միջամտութիւնը: Ցուշագրին կցած էր մի ցուցակ, որի համաձայն հայերը Երևանի նահանգում աւերել էին 88 մահմետական գիւղեր, այրել 1920 տուն և սպանել 131,970 մարդ:

Ադրբէջանի կառավարութիւնը հաղորդում էր, որ «1918թ. յունուարից սկսած, նախ քան Թիւրքերի Երևանի նահանգը գալը՝ հայերը քանդեցին աւելի քան 300 գիւղեր՝ կոտորելով այդ գիւղերի մահմետականների մեծ մասը... Թիւրքերի Երևանի նահանգից հեռանալուց յետոյ, 1918թ. դեկտեմբերին Սասունի գունդը գինաթափեց Երևանի գաւառի Ղարախաչի և Վեդի-Զայի գիւղական համայնքների մահմետականներին և քանդեց Ղաղելու, Շահարլու, Ղարախաչ, Դահնաղ, Ղարաբէգլեար, Աղասի-Բէգլի և այլ գիւղերը՝ կոտորելով յիշեալ համայնքների բոլոր մահմետականներին: Նոյն ճակատագրին ենթարկուեցին Միլլի Դարասի շրջանի մի շարք գիւղերի մահմետականները: Համարեա միաժամանակ, հայ զօրքերը շրջապատեցին Բասար-Դեչարի աւաններն ու կոտորեցին Կըզըլ-Վան, Սուրաթան, Զաղալու, Շահաբ և այլ գիւղերի մահմետականներին՝ բռնաբարելով կանանց և Շահաբ գիւղի բազմաթիւ երեխաներին այրեցին թոնիրներում: Բնաջնջեցին և Էջմիածնի ու Սուրմալուի գաւառների մահմետականներին... Օգոստ. 17-ին հայկական վարչութիւնը հայկական միլիցիայի անմիջական մասնակցութեամբ սկսեց բնաջնջել Էջմիածնի, Սուրմալուի, Երևանի և Նոր-Բայազէտի գաւառների մահմետականներին... Հայկական վարչութիւնը օգոստ. 17—31-ի կարճատև միջոցում կարողացել է ջարդել ու կոտորել Էջմիածնի, Սուրմալուի, Երևանի և Նոր-Բայազէտի գաւառների մէջ 50 գիւղ մահմետականներին»:*)

Հասկանալի է, որ նման դիմումներն ու փաստերը պիտի ազդէին ամերիկացի Հասկելի վրա, որը ո՛չ ծանօթ էր կովկասեան պայմաններին ու բարքերին, ո՛չ էլ գաղութներ կառավարելու վարժութիւնն ունեցող անգլիացու խորագիտութեամբ էր օժտուած:

Հասկելի դրութիւնը քննուեց Խորհրդարանում ու կառավարութեան մէջ և որոշուեց Հասկելի մօտ ուղարկել մի յանձնախումբ՝ պարզելու համար դրութիւնը: Սեպտեմբերի կէսերին Թիֆլիս մեկնեցին Ա. Խատիսեանն ու Ռ. Տէր-Մինասեանը, որոնց բացատրութիւնները լսելուց յետոյ՝ Հասկելը չեղեալ համարեց Ուսուպբէգովի հետ կնքած պայմանագրի Ղարաբաղին ու Զանգեզուրին վերաբերող կէտերը: Բայց այս անգամ էլ Ադրբէջանը մերժեց ընդունել այդ համաձայնութիւնը:

Երկար բանակցութիւններից ու ձգձգումներից յետոյ, սակայն, Հասկելը պնդեց իր տեսակէտի վրա և Նախիջևանի ամերիկացի նահանգապետ Նշանակելով՝ կարգադրեց մտցնել այնտեղ ամերիկեան իշխանութիւն:

---

*) «Աշխատաւոր», 27 սեպտ. 1919թ.